«Գրեցաւ ի թվին ՌՃԻԹ (1680) յուլիս ամսոյ յերկու, ի մայրաքաղաքն Ըստամպոլիս։» (Պողարեան Ն. Եպս. ՄԱՅՐ ՅՈՒՅԱԿ ՁԵՌԱԳՐԱՅ ՍԲԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ Հտ. Բ. Երուսաղէմ, 1953, էջ 163)

Զուղայեցիի այս նամակը նախ կարեւոր է իբր ապացոյց, որ հաշտարար վիճակ մը կը տիրէր իր եւ նախապէս հակաթոռ Եղիազար Այնթապցիի միջեւ, որ կը հրաւիրուի Կ. Պոլիս ազգային խառնակ վիճակը խաղաղեցնելու համար։

Նամակը գրուած է Կ. Պոլիսէն ուր որոշ է թէ հասած էր Յուլիս 2, 1680–էն քիչ առաջ։ Դարձեալ նամակին համաձայն (Թիֆլիսէն) Յակոբ Զուղայեցին եկեր է Կարին (Արզուրում) ուր քաղաքին փաշան նեղութիւն կու տայ կաթողիկոսին որ, Երզնկայի վրայով կարդ մը քաղաքներ այցելելէ վերջ կը հասնի Տիգրանակերտ անկէ Սեբաստիոյ եւ Եւդոկիոյ (Թոխաթ) վրայով Կ. Պոլիս հասնելու համար։ Սակայն Տիգրանակերտի մէջ Խոճա Խոսրով որ անհաշտ թշնամի մըն էր Յակոբ կաթողիկոսին ամբաստանութիւններ կ'ընէ Զուղայեցիի դէմ ըսելով որ անոր նպատակը Հալէպ երթալ եւ անկէ ալ արտասահման փախչիլ է եւ կը ըսուիլէ որ հրամանագիր հանուի եւ դատական պաշտօնեայի մը հետ կաթողիկոսը Կ. Պոլիս բերուի, բան մը որ կը կատարուի արգելք ըլլալով կաթողիկոսին նպատակը եղող էջմիածնայ պարտուց համար ի նպաստ հանդանակութեան։ Յաւելի է որ թուականներ չեն տրուած իր ճամբորդութեան մասին եւ մենք մեծ աշխատութեամբ պիտի ջանանք այս ճամբորդութեան մէկ ժամանակագրութիւնը ներկայացնել։

Հաւատոյ Տարածման Ժողովոյն դիւանէն արտագրելով կը հրատարակեմ Յակոբ Զուղայեցիի մէկ նամակը, որ կարեւոր է ցոյց տալու համար կաթողիկոսին ճամբորդական ժամանակագրութիւնը եւ իր վիճակին մասին ապացոյցներ։

Թուղթին վերը կաթողիկոսին կը-լոր խոշոր կնիքը։

«Յ(իսուս)ի Ք(րիստոս)ի Ծառայ Յակոբ Կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)ս ամ(ենայն) հայոց, եւ Պատրիարգ Վաղարշապատու երկնահանդէտ եւ ազինասարաս, լուսափառ եւ ք(րիստոս)անըկար Սրբոյ մեծի Աթոռոյն Էջմիածնի։ Յորմէ ժամանեալ հասցէ զիր ա(ւր)հնութե(ան) եւ նամակ պահպանութե(ան) շնորհք առաքելական եւ ա(ստուա)ծային բազմապատիկ ա(ւր)հնութի(ւն) եւ նախախնամական զթութի(ւն) ի վ(ե)ր(այ) հոգեւոր որդւոցդ իմոյ Տէր Ղազարիդ, Երեսփոխան եւ մահդասի Մինասիդ, եւ ձերոցդ ամ(ենայն)ի խնդալ ի ա(է)ր առ յոյսն ամենայնի։»

«Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութի(ւն) յա(ստուծո)յ հօրէ ամենակալէ յ(իսուս)է ք(րիստոս)է եւ ի ս(ուր)բ հոգւոյն կենարարէ եւ առատածաւալ պարգեւատուէ եւ բարերարէ Ամէն։»

«Խնամք եւ ողորմութի(ւն) բարերարին ա(ստուծո)յ միշտ եւ հանապազ ի վ(ե)ր(այ) ձեր եղիցի. ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհի, սկիզբն տարոյն, եւ ի կատարած նորին, կրկին կենօք եւ երկու աչխարհօք լցուսցէ զձ(է)զ փառօք ամէն։»

«Եւ ա(ստուա)ծապարգեւ ա(ւր)նութե(ան)ս ծանիք հոգեւոր որդիք, զրեալ էիք յաղագս այդոյն պատին եւ անկելոյն բայց չէիք գրեալ թէ որքան պարտք ունիք, միայն թէ Ներսէս վարդապետին գրես որ գրամ տա։ Ահա գրեցի որ Գ (3) թուման ուղարկէ առ ձեզ որ աչունս, եւ զարունն զամէն անկէք ո(ր)պ(է)ս որ լաւն է այնպէս առնէք։ (*) Սիրելի որդիք, տ(է)ր մի արասցէ եթէ այդոյն կողմանէ Ա. (1) ստակ ձեզ վրայ պարտք թողում։ Զեզանէ միայն ջանալն խնդրեմ որ լաւ եղնի, եւ ս(ուր)բ Աթոռոյն չահ եղնի։ Զանալն՝ ձեզ բարի յիշատակ լինի առաջի ա(ստուծո)յ, եւ խարճն՝ մեզ, ով ոլ վայելէն ի փառս ա(ստուծո)յ լիցի։ Սիրելի որդիք, քուրթու Սարգիս չվարդ(ա)պ(ե)ան՝ եւ արզուրումցի ճաքառ չիարսեղն, ի ս(ուր)բ եկեղեցիդ նստելով, թէ որչափ հաջմունք են արարեալ որ Զուղայեցի Միքայէլ

(*) Անտարակոյս ի սպառ իր հօտէն արտասահման փախչող կաթողիկոս մը պիտի չգրէր այսպէս։ Յ. Բ.